ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/22

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ՆԵՐԱՌԵԼՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2022 թ. մարտի 16-ին՝ ժամը 11.00-ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Գոհար Մամիկոնյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)
Մարիանա Մինասյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Նարեկ Առաքելյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում

Արթուր Մարտիրոսյանը հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց օրակարգի հարցերը: Հանձնաժողովը որոշեց հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը:
Կողմ 4, դեմ 0

1. Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց, որ «Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին» միջոցառման իրականացման նպատակով ԵՔ-ԴՄ-ԺՔՄ-03/22 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի համար սահմանված ժամկետներում հայտեր չեն ստացվել:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման 32-րդ կետ, բ) ենթակետով

1. ԵՔ-ԴՄ-ԺՔՄ-03/22 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը հայտարարել չկայացած:
2. Հաստատել ԵՔ-ԴՄ-ԺՔՄ-03/22 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:
3. Քարտուղարին՝ ARMEPS համակարգով լուծարել ԵՔ-ԴՄ-ԺՔՄ-03/22 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի գործընթացը:
4. Հանձնարարել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ձևավորել նոր գնահատող հանձնաժողով «Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին» միջոցառման իրականացման նպատակով դրամաշնորհի հայտարարման նոր գործընթաց սկսելու համար:
5. Հաշվի առնելով օրակարգի 1-ին կետը և ընդունած որոշումը՝ օրակարգային 2-րդ հարցը հանել օրակարգից:

Կողմ 4, դեմ 0

Արթուր Մարտիրոսյան

Գոհար Մամիկոնյան

Մարիանա Մինասյան

Նարեկ Առաքելյան

Վերոնիկա Խորասանյան